# Հուշաթերթիկ բուժառուի համար

**Ես ընդունում եմ Ռիքուլատրոն (ռիվարօքսաբան) դեղը հակամակարդիչ բուժման շրջանակում**

**ՌԻՔՈՒԼԱՏՐՈՆ** 2,5**մգ** ☐

**ՌԻՔՈՒԼԱՏՐՈՆ** 10**մգ** ☐

**ՌԻՔՈՒԼԱՏՐՈՆ** 15**մգ** ☐

**ՌԻՔՈՒԼԱՏՐՈՆ** 20**մգ** ☐

**Հուշաթերթիկը միշտ պահեք ձեր մոտ:**

**Ցույց տվեք այս հուշաթերթիկը բժշկին, նույնիսկ ատամնաբույժին, յուրաքանչյուր անգամ, երբ դիմում եք բժշկական օգնության:**

**Ծննդյան տարեթիվ.** ______________

**Քաշ.** ______________

**Այլ դեղերի ընդունում (թվարկել).**

______________________________

______________________________

______________________________

**Ուղեկցող հիվանդություններ.**

______________________________

______________________________

______________________________

**Շտապ օգնություն պահանջող իրավիճակների առաջացման դեպքում կոնտակտային անձ (լրիվ անուն, ով է հանդիսանում բուժառուի համար)**

______________________________

______________________________

Հեռախոսահամար.

______________________________

***Տեղեկատվություն առողջապահության ոլորտի մասնագետների համար***

Հարկ չկա հաշվի առնել Միջազգային նորմալացված գործակցի (ՄՆԳ) ցուցանիշները, քանի որ նրանք չեն արտացոլում **Ռիքուլատրոն դեղի** ակտիվության աստիճանը:

## Ի՞նչ պետք է իմանալ Ռիքուլատրոն դեղի մասին

- Ռիքուլատրոն դեղը նոսրացնում է արյունը՝ կանխելով վտանգավոր թրոմբների առաջացումը:
- Ռիքուլատրոնը պետք է ընդունել ճիշտ այնպես, ինչպես նշանակել է Ձեր բժիշկը: Չի կարելի բաց թողնել դեղի ընդունումը՝ թրոմբներից օպտիմալ պաշտպանություն ապահովելու նպատակով:
- Չպետք է դադարեցնել Ռիքուլատրոնի ընդունումը՝ առանց բժշկի հետ նախապես խորհրդակցելու, քանի որ արյան մակարդման վտանգը կարող է մեծանալ:
- Տեղեկացրեք Ձեր բժշկին բոլոր այն դեղերի մասին, որոնք ընդունում եք ներկայում, ընդունել եք նախքան Ռիքուլատրոն դեղի օգտագործումը կամ պլանավորում եք ընդունել:
- Պարտադիր տեղեկացրեք բուժող բժշկին Ռիքուլատրոն դեղի օգտագործելու մասին՝ նախքան ցանկացած վիրահատական գործողություններ կամ ինվազիվ միջամտություն սկսելը:

## Ե՞րբ է անհրաժեշտ դիմել բժշկի

Արյուն նոսրացնող դեղի կիրառման դեպքում, այդ թվում Ռիքուլատրոնի, կարևոր է ուշադրություն դարձնել հնարավոր անցանկալի ռեակցիաներին:
Արյունահոսությունը առավել հաճախ հանդիպող անցանկալի ռեակցիան է: Ինքնուրույն մի սկսեք Ռիքուլատրոն դեղի ընդունումն՝ առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու, եթե ձեր մոտ բարձր է արյունահոսություն առաջանալու ռիսկը: Անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի՝ արյունահոսության ցանկացած ախտանիշի առկայության դեպքում, օրինակ.

- Անսովոր կապտուկների առաջացում, քթային արյունահոսություն, արյունահոսություն լնդերից, կտրվածքներից երկարատև արյունահոսություն,
- սովորականից ավել առատ դաշտան, կամ հեշտոցային արյունահոսություն,
- արյուն մեզի մեջ՝ ընդ որում մեզը կարող է լինել վարդագույն կամ շագանակագույն գունավորմամբ,
- արյան հետքերով խորխոտ հազ, փսխում արյան կամ սրճագույն փսխման զանգվածով,
- ցավ,
- այտուց կամ անհանգստության զգացողություն մկաններում և հոդերում,
- գլխացավ, գլխապտույտ կամ թուլություն:

## Ինչպե՞ս ընդունել Ռիքուլատրոն դեղը

Օպտիմալ պաշտպանության համար Ռիքուլատրոն դեղն ընդունել՝

- 2,5 մգ սննդի ընդունումից անկախ,
- 10 մգ սննդի ընդունումից անկախ,
- 15 մգ սնունդն ընդունելու ժամանակ,
- 20 մգ սնունդն ընդունելու ժամանակ: